ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԿԱԶՄՈՒՄ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՍՏԵՂԾՎԱԾ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ք. Երևան **10 հունվարի, 2023թ.**

ՈՐՈՇՈՒՄ
ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԿԱԶՄՈՒՄ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՆՑԿԱՑՎՈՂ ՄՐՑՈՒՅԹԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ՀՀ վարչապետի 2019 թվականի հունիսի 24-ի «Հակակոռուպցիոն քաղաքականության խորհուրդ ստեղծելու, խորհրդի կազմը և գործունեության կարգը, խորհրդի կազմում ներգրավվող հասարակական կազմակերպությունների մրցույթի և ռոտացիայի կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2015 թվականի ապրիլի 18-ի N 300-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 808-Ն որոշումը (այսուհետ՝ Որոշում) ՀՀ արդարադատության նախարարի՝ 2022 թվականի դեկտեմբերի 20-ի թիվ 781-Ա հրամանի համաձայն՝ Հակակոռուպցիոն քաղաքականության խորհրդի կազմում հասարակական կազմակերպությունների ներգրավման գործընթացի իրականացման նպատակով ստեղծված հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով) միաձայն

ՈՐՈՇԵՑ՝

1. Հիմք ընդունելով Որոշման Հավելված 3-ի 15-րդ կետը՝ «Հակակոռուպցիոն ժողովրդական վերահսկողության միություն», «Փոքր և միջին ձեռնարկատիրության համագործակցության ասոցիացիա», «Թուխմանուկ» հասարակական կազմակերպությունների կողմից ներկայացված հայտերին ընթացք չտալ՝ հաշվի առնելով հայտ ներկայացրած կազմակերպությունների կողմից սահմանված ժամկետում թերությունները չշտկելը:

2. «Առաջատար տեխնոլոգիաների ձեռնարկությունների միություն» և «Տնտեսական իրավունքի կենտրոն» հասարակական կազմակերպությունների

կողմից ներկայացված հայտերը չեն համապատասխանում Որոշման հավելված 2-ի 7-րդ և 7.1-րդ կետերով սահմանված պահանջներին:

3. Հաստատել «Հայաստանի արդյունաբերողների և գործարարների միություն», «Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն», «Իրազեկ քաղաքացիների միավորում», «Իրավաբանների հայկական ասոցիացիա», «Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» հասարակական կազմակերպությունների կողմից ներկայացված փաստաթղթերի համապատասխանությունը Որոշման հավելված 2-ի 7-րդ և 7.1-րդ կետերով սահմանված պահանջներին:

4. Հակակոռուպցիոն քաղաքականության խորհրդի կազմում հասարակական կազմակերպությունների ներգրավման նպատակով անցկացված մրցույթի արդյունքները ներկայացնել հրապարակման Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմի պաշտոնական www.gov.am կայքում, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության պաշտոնական www.moj.am կայքում և anti-corruption.gov.am հարթակում:

Հանձնաժողովի նախագահ՝ ՆՎԱՐԴ ՎԱՐԴԱՆՅԱՆ

Հանձնաժողովի անդամներ՝ ՔՐԻՍՏԻՆԵ ԳԱԲՈՒՋՅԱՆ

ԱՆԱՀԻՏ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

Հանձնաժողովի քարտուղար՝ ՏԱԹԵՎԻԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ